ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վախթանգ Միրումյանի՝ Ռուսաստանի Դաշնություն կատարած այցի արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Վախթանգ Միրումյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Սոչի, Ռուսաստանի Դաշնություն, 2018 թվականի ապրիլի 11-13-ը

4. Հրավիրող կողմը՝

ՌԴ դաշնային մաքսային ծառայության ղեկավարի առաջին տեղակալ Ռ.Վ. Դավիդով, ՀՄԿ գլխավոր քարտուղար Կ. Միկուրիա:

5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության եվրոպական տարածաշրջանի մաքսային ծառայությունների ղեկավարների տարեկան համաժողովին մասնակցելու նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

Համաժողովի ընթացքում քննարկվել են մաքսային ոլորտի արդիական հարցեր, ինչպիսիք են՝ էլեկտրոնային առևտուր, անօրինական ֆինանսական հոսքերի դեմ պայքար, ՀՄԿ եվրոպական տարածաշրջանի տարանցման համակարգերի համադրելիություն: Հատուկ ուշադրություն է դարձվել ՀՄԿ կառավարման, ՀՄԿ անդամակցության ընթացակարգերի կատարելագործման, ինչպես նաև դրա գործընթացներում ռուսերեն և այլ լեզուների լայն կիրառմանը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաժողովին մասնակցել են 38 երկրների պատվիրակություններ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Իրականացվել են երկկողմ հանդիպումներ Իսպանիայի մաքսային ծառայության ղեկավարի հետ, ՌԴ դաշնային մաքսային ծառայության ղեկավարի առաջին տեղակալի հետ, ՀՄԿ գլխավոր քարտուղար Կունիո

Միկուրիայի հետ, քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Միջոցառման ընթացքում քննարկվել են ֆինանսական և աուդիտի կոմիտեների գործունեության զեկույցները, ինչպես նաև ՀՄԿ տարածաշրջանային գրասենյակների, իրավապահ հաղորդակցության կենտրոնի (RILO), վերապատրաստման կենտրոնների, ինստիտուցիոնալ զարգացման կենտրոնի և կինոլոգիական կենտրոնների վերաբերյալ հարցերը: Լսվեցին 2018 թվականի հունիսի 30-ին ՀՄԿ հերթական նստաշրջանի ընթացքում կայանալիք ՀՄԿ գլխավոր քարտուղարի պաշտոնի ընտրություններին առաջադրված թեկնածուների ելույթները:

Հայաստանի և Մեծ Բրիտանիայի մաքսային ծառայությունները եվրոպական տարածաշրջանի կողմից առաջադրվեցին որպես ՀՄԿ աուդիտի կոմիտեի անդամներ: ՀՄԿ աուդիտի կոմիտեի անդամների ընտրությունը ևս տեղի է ունենալու ՀՄԿ ամառային նստաշրջանի ընթացքում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպման որոշումները և առաջարկությունները կարտացոլվեն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատանքային ծրագրերում:

10. Գործուղվողը՝

Վախթանգ Միրումյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

16.04.2018թ.